368.5
Հ-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

ՅԵՎ

ՁԻԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1928

1 MAR 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

368.5
3-11 սգ

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ

ՅԵՎ

ՁԻԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1928

Հանրային գրադարան
Ա. Մանուկյանի անվան
Республиканская библиотека
12641-ՍՂ

1 MAR 2010
09 SEP 2013
44.240

ՊԵՏՀՐԱՏԻ II ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Գրառեպ. 1010 բ. Պատ. № 1106.
Տիրաժ 10,000

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր հանրապետության գյուղացիության անտեսության հիմքը կազմում են խոշոր յեղջյուրավոր անասունները։ Նրանք տալիս են կաթ, միս, աղբ դաշտերը պարարտացնելու համար և այլն։

Գյուղացու համար կովի կորուստը շատ խոշոր ցավ է. լաց կլինեն կանայք, յերեխաները, ընտանիքի կերակրողը սատկել է։

Ձին ու յեզը նույնպես անհրաժեշտ են գյուղացուն։ Առանց նրանց գյուղացին չի կարող իրա հողը վարել։ Ձիուց և լծկանից զուրկ աղքատ գյուղացիները, իրենց վարը անելու համար, ժամանակավոր կերպով վարձում են ավելի ունևորներից ձի կամ յեզն վճարելով բավականի դգալի գումար։

Գյուղացին գդում է լծկանի կամ կովի անհրաժեշտությունը իրա անտեսության համար և աշխատում է մի կերպ անտեսել, փող հավաքել գնելու համար։ Շատ շատերին հաջողվում է ձեռք բերել վորևե անասուն։ 1922 թվից գյուղացու անասունների թիվը կամաց-կամաց մեծանում է։ Խորհրդային իշխանությունը ամեն կերպ ոգնում է գյուղացիներին անասուն ձեռք բերելու գործում։

Սակայն գյուղացու անասունները շատ թշնամիներ ունեն, նրանք շատ են փնասվում զանազան վարակիչ հիվանդություններից, ժանտախտից սիբիրախտից և այլն։

Գյուղացու անասունները սպանվում են նույնպես և վոչ վարակիչ հիվանդություններից, դժբախտ պատահար-

ներից. որինակ սարից ու ձորից գլորվելուց, զանազան ջարդվածքներ ստանալուց, հրդեհից, ջրում խեղդվելուց և այլն։ Միայն մեկ տարվա ընթացքում 1926 թ. հոկտեմբերի 1-ից մինչ 1927 թ. հոկտեմբերի 1-ը, Հայաստանում վորտեղ կար կոպարային պարտադիր ապահովագրություն ստացել էին 56,000 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն։ Յեթե հաշվելու լինենք ամեն մի ստացած անասունի գինը 100 ռուբլի (իսկ իրական գինը շատ ավելի բարձր է), կստացվի մոտ 5,600,000 ռուբլի։ Ահա թե ինչքան է կորցրել գյուղացին անասունների ստացումից, են էլ միայն, Հայաստանում։

ԻՆՉՈ՞Ւ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.

Պետք է պայքարել անասունների անկման դեմ։ Ամենից առաջ պետք է աշխատել, վորպեսզի անասունների հիվանդության դեպքերը պակասեցնել։ Դրա համար անհրաժեշտ է լավ խնամել նրանց, ձմեռը պահել տաք դոմում, լավ և կանոնավոր կերպով կերակրել, իսկ հիվանդանալու դեպքում, իսկույն և յեթ դիմել անասնաբուժին կամ անասնաբուժակին և վոչ թե զանազան «գիտունների», վորոնք յերբեք էլ չեն կարող բժշկել հիվանդ անասունին

Չնայած վերոհիշյալ բոլոր ձեռք առած միջոցներից, դժբախտությունը այնուամենայնիվ անխուսափելի է։ Յերբ գյուղացին զրկվում է իր անասունից, դա հավասարազոր է, մարդը առանց ձեռքի։

Ի՞նչպես պիտի ոգնել գյուղացուն, յերբ ստացել է նրա անասունը։ Ոգնել կարելի յե միայն ապահովագրությամբ։

Ապահովագրությունն է այն միակ ուղին, վորով գյուղացին վերականգնում է իր տնտեսությունը, ստանալով ստացած անասունների վնասը։

Ի՞նչումն է կայանում անասունների ապահովագրումը։

Գյուղացի Պետրոսը ուզում է ապահովագրել իր կովը, դրա համար նա պետք է վճարի Պետապի գործակալին, կամ նրա գանձողին մի աննշան գումար։ Դրա փոխարեն Պետրոսը ստանում է Պետապից ապահովագրական վարձատրություն իր հիվանդությունից կամ դժբախտ դեպքից ստացած անասունի համար։ Ապահովագրությունը ոգնում

և գյուղացուն ձեռք բերելու կորցրած անասունի փոխարեն նորը։

Բայց միայն դրամ ստանալը և վճարելը չէ։ Հարկավոր է հաշվառման յենթարկել բոլոր անասունները, գրանցել այդ հատուկ ցուցակներում, կազմել տալ յուրաքանչյուր սատակած անասունի համար ակտ, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի սատակումները չդառնան համատարած։ Այդ ամբողջ գործը կատարելու համար գոյություն ունի խորհրդային ապահովագրություն, կամ ինչպես անվանում են «Պետական ապահովագրություն», իսկ կրճատված «Պետապ» Պետապը գյուղերում ունի իր գործակալները։ Անասունների պետական ապահովագրությունը սահմանված է դեռ 5 տարի սրանից առաջ ընկ. Լենինի ցուցմունքով։ Դրա համար խնդրել եյին նրան գյուղացիները։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒՄԸ ՑԱՐԻ ՈՐՈՔ ՅԵՎ ՀԻՄԱ

Ցարական կառավարությունը չեր հոգում գյուղացիների կարիքները, չեր ապահովագրում նրանց անասունները։ Յերկար տարիների ընթացքում զեմստվոյական ապահովագրությունը գյուղացուն շատ չնչին ոգուտ եր տալիս։

Բոլորովին այլ կերպ է դրված գործը հիմա։ Հայ Պետապը 1926—27 գործառնական տարում վճարել է գյուղացիներին, միայն 56,000 գլուխ սատակած անասունների համար մոտ 1,116,000 ռուբլի։

Խորհրդային ապահովագրությունը ձգտում է ապահովագրել գյուղացիների բոլոր անասունները։ Այդ դեպքում գյուղացին և համատարած սատկումների ժամանակ կստանա ապահովագրական վարձատրությունը ու կբուժի իր վերքերը։

Միայն 1925—26 գործ. տարվա ընթացքում խորհրդային ապահովագրությունը վճարել է սատակած խոշոր

յեղջուրավոր անասունների վրա 13,371,912 ռուբլի, իսկ ձիերի 11,196,808 ռուբ.։

Խորհրդային իշխանությունը հատուկ ուշադրություն է դարձնում անասունների ապահովագրության գործին և ամեն կերպ աշխատում է լավացնել ու զարգացնել այդ գործը։

ՊԱՐՏԱԴԻՐ ՅԵՎ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՇՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անասունների ապահովագրությունը լինում է պարտադիր յեվ կամավոր։ Յեթե վորևե շրջանում սահմանված է խոշոր յեղջուրավոր անասունների պարտադիր ապահովագրություն, ապա ուրեմն այդ շրջանի բոլոր խոշոր յեղջյուրավոր անասունները պետք է ապահովագրված լինեն պարտադիր կերպով։ Այլևս ամեն մի գյուղացու չեն հարցնի թե նա ցանկանում է ապահովագրել իր անասունը, թե վոչ. նա պետք է յենթարկվի սահմանված պարտադիր ապահովագրության։

Բոլորովին այլ բան է կամավոր ապահովագրությունը։ Այդ դեպքում յուրաքանչյուր գյուղացի ինքն է վճռում, թե հարկավոր է ապահովագրել իր անասունը թե վոչ։ Կցանկանա կապահովագրվի, չի ցանկանա, չի ապահովագրվի, ահա թե ինչու այդ ապահովագրությունը կոչվում է կամավոր։

Յեթե ապահովագրությունը դարձնել միայն կամավոր, կստացվի հետևյալը,—մեկը չի կարող հարկավոր փող հավաքել, մյուսը կմոռանա ժամանակին մուծումը կատարել, իսկ յերրորդը հույսը դնելով «աստծու» վրա և չի ապահովագրվի։ Իսկ փորձանքը գալու դեպքում, յերբ կսկսվի անասունների համատարած սատկումը, հազարով կկոտորվեն անասունները, վերսված տնտեսությունները վոչինչ չեն ստանա պետությունից։

Այլ բան է պարտադիր ապահովագրությունը։ Պարտադիր ապահովագրությամբ գյուղացու թե խոշոր յեղջյուրա-

վոր անասունը և թե ձիերը, ջորիները, ուղտերը և եշերը համարվում են ապահովագրված, անկախ նրանից կարողացել է նա իր ժամանակին մուծել ապահովագինը, թե վոչ, միևնույնն է նրա անասունը ապահովագրված է։

Ուստի խորհրդային իշխանությունը վորոշել է սահմանել պարտադիր կոպարային և կամավոր ապահովագրություն։ Պարտադիր ապահովագրությունից գանձվում է գյուղացիներից աննշան գումարներ և վնասի դեպքում նույնպես վճարում է չնչին գումար։ Իսկ կամավոր ապահովագրությամբ յուրաքանչյուր գյուղացի ապահովում է իրեն, վճարելով լրացուցիչ ապահովագրության համար լրացուցիչ ապահովագին։

Անասունների ապահովագրությունը ինչպես մենք կըտեսնենք հետո շատ ուժան գործ է։

Ապահովագրական հասակի անասունների համար, յուրաքանչյուր գլխին վճարում են ընդամենը 68 կոպեկից մինչև 3 ռուբլի., մեկ տարում։

Ինչպես են վերաբերվում գյուղացիք անասունների պարտադիր ապահովագրության։

Գավառական խորհուրդների և գավառական գործկոմների համագումարները միշտ էլ արտահայտվել են հոգուտ անասունների պարտադիր ապահովագրության. նույնիսկ գյուղացիներից մեկը գրում է, ներկայումս նկատվում է անասունների համատարած սատակում, հաճախ տվյալ անտեսության վերջին անասունն է սատակում։ Կարող է արդյոք չքավոր գյուղացին ձեռք բերել սատակած անասունի փոխարեն նորը, յեթե նրան չողնի պետական ապահովագրությունը, իհարկե վոչ։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄԸ

Ինչքան են վերցնում գյուղացուց անասունների պարտադիր ապահովագրության համար ապահովագին և ինչքան են վճարում նրան անասունը ընկնելիս։

Պետք է ընդմիշտ գիտենալ, վոր գյուղացուց անասունների համար վերցնում են ապահովագին վորոշ ու ճիշտ հաշվարկով։ Այդ հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով. Յենթադրեք Նորագավիթ գյուղում կա 100 գլուխ կով, բոլոր այդ կովերը ապահովագրված են պարտադիր կերպով։ Քանի անասուն է սատկում այդ գյուղում մեկ տարում։ Իհարկե սատկած կովերի թիվը տարբեր կլինի տարբեր տարիներում, բայց միջին թվով, մեկ տարում սատկում է 5 անասուն (կով)։ Պետք է վճարել այդ անասունների վնասը, յուրաքանչյուր գլխին 35 ռուբլի, ընդամենը 5 կովի համար 175 ռուբլի։

Վո՞րտեղից վերցնել այդ փողերը։ Այդ փողերը, 175 ռուբլին գանձվում է, այդ բոլոր 100 կովատերերից, 100 կովի համար կովատերերը պիտի վճարեն ապահովագին ընդամենը 158 ռուբլի, յուրաքանչյուր կովի համար 1 ռ. 58 կոպեկ։ Կարելի յե հաշվել, վոր՝ գյուղացին վճարում է, վոչ թե ապահովագին, այլ ի հաշիվ այն սատանալիք 35 ռուբլու, վորը տալիս է Պետապը սատակման դեպքում։ Ուրեմն գյուղացին, վոր այդ 35 ռուբլուց, 15 ռուբլու դիմաց մուծում է տարեկան 68 կոպեկով։ Հետևապես ամեն մի գյուղացի իր ապահովագրված անասունի սատանալիք 15 ռուբլու համար մուծում է տարեկան 68 կոպեկ։ Այդ գումարից պակաս գյուղացուց վերցնել անկարելի յե, վորովհետև հակառակ պարագայում փողը չի բավականացնի վճարելու բոլոր վնասները սատակումից։

Շատ հաճախ գյուղացիները իրենց նամակներով հարցնում են «չի կարելի արդյոք անասունների ապահովագրումը ժամանցնել»։ Վոչ, չի կարելի։ Խորհրդային ապահովագրությունը չի ձգտում յերբեք շահ ստանալու։

Ապահովագրությունը ներկայումս պետական է, խորհրդային, նա վերցնում է գյուղացուց այնքան փող, վորքան անհրաժեշտ է վճարելու նրա վնասը և ծածկելու

գործավարության ծախքը և ունենալու պահեստի դրամագլուխ, անասունների համաճարակը լուծարքելու։

Հետևապես որքան մեծ է անասունների անկումը, այնքան բարձր է ապահովագինը և ընդհակառակը, որքան փոքր է անասունների անկումը, այնքան աժան է ապահովագինը։

Բայց անասունների անկումը, զանազան տեղերում տարբեր է լինում։ Յերկու տարվա հաշվառումը ցույց է տալիս, որ խոշոր յեղջուրավոր անասունների անկումը Հայաստանում ավելի մեծ է, քան մյուս յերկրներում, հետևապես Հայաստանում յեղջուրավոր անասունների ապահովագինը ավելի բարձր է, քան Ռուսաստանում։

Ձիերի անկումը ավելի մեծ է, քան յեղջուրավոր անասունների, դրա համար էլ ձիերի ապահովագինը ավելի բարձր է, քան թե անասունների։ Ձիերի ապահովագին բոլոր նահանգներում սահմանված է 50 ռուբլու դիմաց 3 ռուբ., 1 տարում։ Ուրեմն յեթե ձին ապահովագրված է պարտադիր կերպով 50 ռուբլով, ապա գյուղացին պետք է մուծի նրա համար ապահովագին, տարեկան 3 ռ.։ Ուղտերի, եշերի, ջորիների համար, նույնպես վերցվում է 10 ռուբլու դիմաց 60 կոպ. մեկ տարում։

Պարտադիր ապահովագրության ապահովագների մուծման ժամկետ սահմանվում է հունվարի 1-ը։

ՁՔԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՏՐՎԵԼԻՔ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդային իշխանությունը գյուղացիներին տրամադրում է անասունների ապահովագրության արտոնություններ։

Պետական ապահովագրության 3 տարվա ընթացքում նկատվում եր, որ գյուղացիների վրա կուտակվում եր հետանույթ։ Ինչից եր գոյանում այդ հետանույթը, չվճարող-

ների թվում կային նաև կուլակներ, որոնք կարող էին վճարել, բայց չէին ցանկանում։ Նրանք ասում էին «Պետությունը տված ռուբլին մեռյալ է, յես նա շրջանառության մեջ կառնեմ և այդ ռուբլին ինձնորանոր ռուբլիներ կտա»։ Բայց չքավորների թվում կան նաև միջակներ և չքավորներ, որոնք հաճախ հնարավորություն չունեն ապահովագինը վճարելու։

Ունևոր չվճարողների վրա բարդվում եր տույժ, որքան ուշացնում է մուծումը սահմանված ժամանակից հետո, այնքան ավելի յե բարդվում տույժը։

Յուրաքանչյուր ռուբլուն, սահմանված ժամկետից ուշ վճարելու համար վերցվում է տույժ, 5 որվա համար 1 կ. կամ մեկ ամսվա համար 6 կոպեկ։ Յեթե վճարելու յե 1 ռուբլի և ուշացրել է 2 ամսով, ապա նա պիտի վճարի ոչ թե 1 ռուբլի, այլ 1 ռուբլի 12 կոպեկ։

Ապահովագրական կոպարային վճարումները յեթե սահմանված ժամկետին չեն մուծվում (մինչ հունվարի 1-ը) բռնագանձվում են վարչական կարգով, բարդելով վրան տույժ։

Իհարկե կարիք չկա վճարումները ձգձգելու. միևնույն է վաղ թե ուշ պիտի վճարել, ապա ավելի լավ է վճարել իր ժամանակին, առանց տույժի։

Աշխատանքի և պաշտպանության Խորհրդի որոշմամբ գյուղացիության տրամադրվում է արտոնություններ, ազատելով նրանց ապահովագրական վճարումներից լրիվ, կամ մասնակի չափով։ Նրանք թեև չեն վճարելու կամ վճարելու յեն շատ չնչին գումար ապահովագին, միևնույն է, նրանք կատանան դժբախտության դեպքում ապահովագրական վարձատրություն։ Սակայն արտոնության ընդհանուր գումարը չպետք է գերազանցի հաշվարկի ընդհանուր գումարի 12 տոկոսից։

Քաղաքի չքավոր բնակչությունը և կարմիր-բանակայինների ընտանիքները նույնպես ազատվում են անա-

սունների պարտադիր կոպարային ապահովագնելից։ Բայց դիմման գումարը 7 տոկոսից ավելի չպետք է լինի, անասունների կոպարի հաշվարկից։ Եթե որինակ. վորևե գավառական-քաղաքի բնակչությունից պետք է գանձել անասունների 1000 ռ. ապահովագին, ապա կարելի է այդ բնակչությունը ազատել վոչ ավելի 70 ռուբլուց։

Արտոնություն տրվում է.—

1. Այն տնտեսություններին, վորոնց աշխատողները գտնվում են կարմիր-բանակում նաև հաշմանդամներին։

2. Գաղթականների, վերաբնակիչների և տարագրների տնտեսություններին, վորոնք ազատված են գյուղմյասհարկից բոլորովին։

3. Զբաղվոր գյուղացիական տնտեսություններին վորոնք ազատվում են, գյուղմյասհարկից, ըստ հարկադրման չլենթարկվող մինիմումի։

4. Զբաղվոր գյուղական տնտեսություններին, վորոնք տուժել են տարերային, աղետներից։

5. Մնացած թույլ գյուղատնտեսություններին, յեթե հնարավոր է, արտոնության ֆոնդի այն գումարից, վոր հատկացրված է տվյալ գյուղխորհրդին։

Բացի դրանից արտոնությունները վորոշ դեպքում տրվում է կոլեկտիվ տնտեսություններին (կոմունաներին արտելներին, նաև հասարակական կազմակերպությունների տնտեսություններին)։

Արտոնությունները բաշխվում են գյուղխորհրդի միջոցով, մասնակցությամբ գյուղկոմի, բատրակկոմի։ Վերոհիշյալ արտոնություններից ոգտվող գյուղացիները ներկայացնում են համապատասխան վկայական գյուղխորհրդին, վորպեսզի իրենց ազատեն լրիվ կամ մասնակի պարտադիր կոպարային ապահովագնելից։

Որինակ.—Կարապետյան Գրիգորը գտնվում է չքավոր դրության մեջ, նա ազատված է մյասհարկից. վորպեսզի ազատվի նաև Պետապի պարտադիր ապահովագնից, նա ներկայացնում է գյուղխորհրդին չքավորության վկայական և խնդրում է ազատել իրեն նաև Պետապահովագրության ապահովագնից, համաձայն տնտեսակ. խորհրդի վորոշման։

Արտոնությունների ճիշտ չբաշխվելու դեպքում, գյուղացիները բողոքում են շրջգործկոմին և Պետապի գործակալին։

Պրոֆմիության անդամներին, բանվորներին և ծառայողներին, սոցիալական ապահովագրությամբ ապրողներին, կամավոր հրդեհաշեջ խմբերի անդամներին և տնայնագործ միակներին, քաղաքներում տրվում է զեղչ, 20%-ով։

ԸՆԿԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԵԼԻՔ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ

Ըստ պարտադիր ապահովագրության, յուրաքանչյուր յերկրի համար, ամեն մի անասուն ապահովագրվում է միևնույն գումարը։ Այդ նշանակում է. որինակ յեթե մի գյուղացու կովը արժե 60 ռուբլի, մյուսինը 35 ռուբլի միևնույնն է, յեթե այդ կովերը սատկեցին, տերերը կբստանան հավասարաչափ ապահովագրական վարձատրություն, վորովհետև նրանք մուծել են նույնպես հավասարաչափ ապահովագին։ Միանման վնասողին, միանման ել վարձատրություն։

Հայաստանում խոշոր յեղջուրավոր անասունների համար, Պետապը վճարում է, ապահովագրական վարձատրություն, կովերի, յեզների համար յուրաքանչյուր գլխին 35 ռուբլի, գոմեշի և մատակների համար 50 ռուբլի, ձիերի՝ 50 ռուբլի, ջորիների՝ 50 ռուբլի, ուղտերի՝ 50 ռուբլի և եշերի՝ 20 ռուբլի։

Գյուղացիները հաճախ Պետապի գործակալն հարցնում են «Դա ինչ արդարություն է, իմ կովը արժե 100 ռուբլի, իսկ դուք նրա սատակման դեպքում վճարում եք 35 ռուբլի։ Մի՞թե յես կարող եմ 35 ռուբլով նոր կով գնել»։ Այդորինակ հարցեր տալիս են նաև ձիատերերը

35 ռուբլով իհարկե կով չի կարելի գնել, իսկ յեթե յուրաքանչյուր կովը ապահովագրվեր 100 ռուբլով, դժգոհների թիվը շատ մեծ կլիներ։ 35 ռուբ. ապահովագրման դեպքում, անասնատերը վճարում է գլխին 1 ռ. 58 կոպ. իսկ յեթե ապահովագրված լիներ 100 ռուբլով, այն ժամանակ պիտի վճարեր, այդ կովի համար 4 ռուբլի։ Այդպիսի ապահովագրությունը ձեռնտու յե միայն ունևորներին։

Պարտադիր կոպարային ապահովագրական դումարի չափը վորոշելիս, պետք է հարմարեցնել գյուղացիական միջակի և չքավորների շահերին և վոչ թե՝ ունևորների, չե՛ վոր միջակների և չքավորների թիվը գյուղում կազմում է ճնշող մեծամասնություն և հենց ներկայումս ել գյուղացիական այդ տարրերի վրա, կա կուտակված բավականաչափ ապահովագրական հետևություն։

Խորհրդային իշխանությունը շատ արդարացի յե վարվում, նա գիտե, վոր մեր գյուղացին դեռևս աղքատ է. մեծ ապահովագներ վճարելու նրա ուժը չի պատի։ Ահա թե ինչու գյուղացիներից վերցվում է, ըստ կոպերային պարտադիր ապահովագրության չնչին ապահովագին. ինչպես և ֆնասի դեպքում տրվում, վոչ խոշոր գումար, մոտավորապես փաստական արժեքի $^1/_3$-րդ մասը։

Յեթե վորևե անասնատեր ցանկանում է ապահովագրել, իր կովը կամ ձին, նա և այժմ ել կարող է այդ անել, ըստ կամավոր-լրացուցիչ ապահովագրության։

ՎՈ՞Ր ՀԱՍԱԿԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Պարտադիր կոպարային ապահովագրությամբ, ապահովագրվում են խոշոր յեղջյուրավոր անասունները $1^1/_2$ տարեկանից, ձիերը $2^1/_2$ տարեկանից։

Հաճախ պատահում է, վոր գյուղացին իր սատակած $1^1/_2$ տարեկան հորթի համար, գործակալից պահանջում է ապահովագրական վարձատրություն։

Գործակալը բացատրում է նրան, վոր հորթը ապահովագրված չե, սակայն գյուղացին չի հավատում առարկելով. «Ինչու յերբ կենդանի յե ապահովագրված է, իսկ յերբ սատակել է ապահովագրված չե, խաբել են ուզում»։

Բայց իրականում վոչ մի խաբեություն չկա, հորթերը մինչև $1^1/_2$ և ձիերը $2^1/_2$ տարեկան հասակը չեն ապահովագրված և դրանց համար ապահովագին չի մուծվում։

ԻՆՉ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԳՅՈՂԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ.

Գյուղացին ստանում է ապահովագրական վարձատրություն զանազան հիվանդություններից, կամ դժբախտ դեպքերից (գազանների պատառոտելուց, հրդեհից, կայծակահարությունից) սատակած անասունի համար։

Կարող է պատահել, վոր անասնաբուժը առաջարկի գյուղացուն մորթել իր հիվանդ անասունը, վորը վարակված է վարակիչ հիվանդությամբ և կարող է վարակել առողջներին։ Այդպիսի դեպքերում Պետությունը վճարում է ֆնասը։

Իսկ յեթե գյուղացին իր առողջ անասունը մորթում է, վորպես մսացու, իհարկե Պետությունը նրան ապահովագրական վարձատրություն չի վճարում։

Յեթե անասունը հիվանդ է անբուժելի հիվանդությամբ, և վոչ մի բանի պիտանի չե, անասնատերը կարող է մորթել, վորպեսզի ավելորդ չկերակրի նրան։ Այդպիսի ֆնասը Պետությունը վճարում է լրիվ կերպով, պայմանով սակայն, վոր անասնաբուժը կամ անասնաբուժակը մինչև անասունի մորթելը տա իր յեզրակացությունը, հիվանդության անբուժելիության մասին։

Որինակ.—Մարկոսյան Գրիգորի կովը հիվանդությունից սատակել է. Գրիգորը այդ մասին դիմում է գյուղխորհրդի նախագահին։ Գյուղխորհուրդը տեսնելով դիակը,

կազմում է ակտ, վորը ներկայացնում է գործակալին, գործակալը քննելով ակտը բավարարում է Գրիգորի ՁԱՍը, վճարելով նրան 35 ռուբլի։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄՆ.

Անանատիրոջ բոլոր անասունները պետք է ցուցակագրված լինեն։ Ցուցակագրության համար կազմվում են հատուկ ցուցակներ, ուր գրվում է, թե ով, վորքան անասուն ունի։ Այդ ցուցակները վերջնականապես ստուգվում են գյուղական ժողովում, անանատիրոջ հարցաքննությամբ։ Ահա այստեղ պետք է գյուղացիները հետևեն, վոր բոլորը ցույց տան իրենց անասունների քանակը, ճիշտ կերպով։

Յեթե ցուցակագրությունից հետո տվյալ տնտեսության մեջ ավելանում կամ պակասում է վորևե անասուն, (գնել, վաճառել և սատկել) տերը այդ մասին անպայման պիտի հայտնի գյուղխորհրդի նախագահին կամ Պետական գործակալին, վերցնելով նրանից համապատասխան վկայական։

Որինակ՝—Մաթեվոսյան Կիրակոսը ցուցակագրությունից հետո գնել է մի կով, նա այդ մասին հայտնում է գյուղխորհրդին, վերջինից վերցնելով վկայական և վկայականը ներկայացնում է գործակալին, վորպեսզի գործակալը համապատասխան ուղղում մտցնի այդ տնտեսության անվանական ցուցակում։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.

Մենք արդեն տեսանք թե ինչ նշանակություն ունեն ապահովագրական գործում անասնաբուժները և անասնաբուժակները։ Անասնաբուժական գործը մեզանում դեռ ևս այնքան էլ լավ չի դրված։

Շատ տեղերում նույնիսկ չկան անասնաբուժներ

կամ անասնաբուժակներ։ Հայաստանին անհրաժեշտ է մոտավորապես 50 անասնաբուժ, սակայն կա միայն 30 հոգի։ Հաճախ այդ անասնաբուժները չեն ունենում հարկավոր դեղորայք և անհրաժեշտ գործիքներ։

Խորհրդային իշխանությունը աշխատում է, վոր անասունների անկումը պակասի։ Խորհրդային ապահովագրությունը նույնպես յուր կողմից դրամներ է բաց թողնում, անասնաբուժական գործի համար դեղորայք կամ գործիքներ գնելու և սրսկելու։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Պարտադիր կոպարային կարգով ապահովագրված անասունի սատակած դեպքում, ապահովագրվողը ստանում է մոտավորապես նրա փաստական արժեքի մոտ $^1/_3$-րդ մասը։ Այդպես է արվում, վորպեսզի գյուղացիներից մեծ ապահովագին չգանձվի։ Սակայն լինում են այնպիսի ուժեղ տնտեսություններ, վորոնց համար միայն կոպարային ապահովագրությունը բավական չէ։ Նրանք ուզում են ապահովագրել իրենց անասունը լրիվ գնով։ Ահա այդ կարելի է անել լրացուցիչ ապահովագրությամբ։

Այդ ապահովագրությունը կոչվում է նաև կամավոր, վորովհետև բացառապես կախված է գյուղացու բարի կամքից, կցանկանա կապահովագրի, չի ցանկանա չի ապահովագրի։

Կամավոր ապահովագրությունը լինում է 2 տեսակ, լրացուցիչ—կոպարային և զուտ կամավոր։ Գյուղացիության համար եական նշանակություն ունի լրացուցիչ ապահովագրությունը, վորի մասին կխոսենք ավելի մանրամասն։

Լրացուցիչ ապահովագրությամբ նույնպես չի կարելի անասունը ապահովագրել իր լրիվ արժեքով։ Ինչու՞ է

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ անվան
12641-57

սահմանված այդպես հրահանգ-կանոն։ Հարկավոր է ավելի ժանրամասն ծանոթանալ այդ հանգամանքի հետ։

Խոշոր յեղջյուրավոր անասունների և ձիերի գինը յերբեմն բարձրանում է, յերբեմն իջնում։ Աշնանը անասունների գինը ավելի ցածր է քան թե գարնանը, իսկ յերաշտի դեպքում, անասունների գինը բավականին ընկնում է։

Որինակ. գյուղացին գնել է գարնանը մի կով և ապահովագրել լրիվ արժեքով՝ 100 ռուբլով։ Աշնանը նույն վայրում, այդ կարժենա 60 ռուբլի։ Բնական է, որ անասնատերը վատ կերակրի այդպիսի կովը, խնամք չտանի բոլորովին և հացնի մինչև սատակումն ու համաձայն ապահովագրության ստանա ապահովագրական վարձատրությունը՝ 100 ռուբլին։ Անասնատերը ստանալով 100 ռուբլին, 60 ռուբլով կգնի մի այդպիսի կով, իսկ 40 ռուբլին կդնի գրպանը։ Վորպեսզի այդպիսի դեպք չկատարվի, խորհրդային իշխանությունը առաջադրում է հետևյալ միջոցը։

Ըստ լրացուցիչ ապահովագրության, խոշոր յեղջյուրավոր անասունները և ձիերը յերբեք չեն ապահովագրվում իրենց լրիվ արժեքով։ Անպայման անասունի արժեքի մի մասը պիտի թողնել անասնատիրոջ վրա, վորպեսզի նա իր հերթին անասունին լավ խնամի և հույսը չդնի միայն ապահովագրական վարձատրության վրա։

Լրացուցիչ ապահովագրությամբ անասունը պիտի ապահովագրել այնպիսի գումարով, որ ավելի չլինի կոպարային ապահովագրության ապահովագրական վարձատրության հետ միասին, իրական արժեքի $^3/_4$-ից։

Լրացուցիչ կերպով կարելի է ապահովագրել միայն այն անասունները, վորոնք ապահովագրված են կոպարային կարգով։ Յեթե մի վորևե վայրում չի սահմանված կոպարային ապահովագրություն, ապա կարելի է ապահովագրել վոչ թե լրացուցիչ կարգով, այլ զուտ կամավոր կերպով։

Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի է ապահովագրել տվյալ տնտեսության բոլոր անասունները, կամ միայն բոլոր կովերը. կամ բոլոր յեզները (առանց հորթերի)։ Ո ինակ գյուղացի Սարգսյանը ունի 3 կով և 2 յեզ։ Նա կարող է լրացուցիչ կերպով ապահովագրել կամ բոլոր անասունները, կամ 3 կովը, կամ 2 յեզը։ Նա անպայման պետք է ապահովագրի, կամ բոլոր կովերը, կամ բոլոր յեզները։

Ինչու է այդպես սահմանված, յեթե Սարգսյանի բոլոր կովերը կամ յեզները ապահովագրված չլինեն, սատակման դեպքում, նա կարող է միշտ ել պնդել, թե հենց այդ սատակածն է յեղել լրացուցիչ ապահովագրվածը։ Լրացուցիչ ապահովագրությամբ կարելի է ապահովագրել, կամ բոլոր ձիերը, կամ բոլոր արու (վորց), կամ բոլոր եգ ձիերը (մադյան)։

Լրացուցիչ կերպով ապահովագրվում են միայն առողջ անասունները, հիվանդները չեն ապահովագրվում։

Ձիերը և ուղտերը ապահովագրվում են լրացուցիչ կարգով վոչ բարձր 15 տարեկանից։

Հաճախ գյուղացիները գրում են «Յես ապահովագրել եմ իմ կովը, լրացուցիչ կերպով հունվարի 5-ին. 5-ին ել վճարել եմ ապահովագինը լրիվ կերպով և ստացել անդորագիրը։ Կովս սատկել է հունվարի 12-ին, իսկ ինձ ապահովագրական վարձատրություն ինչու չեն վճարում»։

Այդպես ել պիտի լինի, վորովհետև ապահովագրական կանոնների համաձայն, ապահովագրական վարձատրությունը տրվում է այն դեպքում, յեթե անկումն տեղի է ունեցել, ապահովագրությունից 15 որ հետո։ Կովը ապահովագրված եր հունվարի 5-ին։ Պետական ապահովագրությունը վճարում է նրա վնասը վոչ ուշ հունվարի 20-ից։ 15 որվա ժամկետը սահմանված է նրա համար, վորպեսզի դիտավորյալ կերպով, դեռ ևս չպարզված հիվանդ անասունը չապահովագրվի։

Իսկ յեթե լրացուցիչ կերպով ապահովագրված անասունը սատակում է դժբախտ պատճառից, որինակ ընկել է գնացքի տակ, Պետապի պատասխանատվությունը հաժարվում է անմիջական, վնասը վճարվում է ժամկետից շուտ։ Որինակ գյուղացին ապահովագրեց, լրացուցիչ կարդով իր կովը հունվարի 8 ին, իսկ հունվարի 10 ին կովը ընկավ գնացքի տակ, կամ կայծակահար յեղավ, այդ դեպքում Պետապը վճարում է վնասը։

Վորպեսզի լրացուցիչ կերպով ապահովագրություն կնքվի, անասնատերը պիտի հայտնի Պետապի գործակալին, մուծի ապահովագինը և ստանա նրանից անդորրագիր։ Անասնաբուժը չի քննում այդ ապահովագրվող անասունը, այլ միայն զննում է պետապի գործակալը։ Նշանակում է լրացուցիչ կերպով կարելի յե ապահովագրել ամեն ժամանակ։

Ապահովագրությունը կնքվում է մեկ տարով։ Որինակ դեկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը, կամ հունվար 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ։

Ձիերի լրացուցիչ ապահովագրության ապահովագինը լինում է զանազան չափով։ Վորքան ձին մեծ է, այնքան մահացությունը շատ է, ուստի ձիերի լրացուցիչ ապահովագրության վճարումների չափը պայմանավորվում է նրանց արիքով։

Լրացուցիչ ապահովագրությունը անասունների և ձիերի, ստիճանաբար զարգանում է։

Մեր գյուղացիությունը դեռ ևս աղքատ է և չնայած վոր լրացուցիչ ապահովագրության ապահովագինը շատ մեծ չե. խոշոր յեղջ. անասունի համար վճարվում է ապահովագումարի 5%-ը ձիերի, եշերի, և ջորիների համար 7%։

Որինակ.—Գյուղացի Սարգսյանը ապահովագրել է իր կովը լրացուցիչ-կամավոր կարգով 100 ռուբլով, նա վճարելու է 5%, այն է 5 ռուբլի ապահովագին։ Այդ

նշանակում է վճարելով 5 ռուբլի լրացուցիչ ապահովագին, կովը սատակելու դեպքում ստանում է 100 ռ. ապահովագրական վարձատրություն։

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՈԼԼԵԿՏԻՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ.

Ամեն մի գործ ավելի ձեռնտու յե կատարել միասին, արտելով, քան թե անհատապես. նույնը և անասունների ապահովագրության գործում։ Այդ դեպքում բավական է մի քանի անասնատերեր, ընտրեն իրենց ապահովագրական ընկերության ներկայացուցիչ, վորը վարում է ապահովագրության գործերը։

Այդպիսի ապահովագրությունը կոչվում է կոլլեկտիվ։ Կոլլեկտիվի թիվը պետք է լինի վոչ պակաս 10 տնտեսություններից։

Կոլլեկտիվի ներկայացուցիչը դանձում է բոլորից ապահովագրական ապահովագինը և հանձնում է Պետապի գործակալին. նա հետևում է, վնասների վճարման դեպքում Պետապի կանոնների ճիշտ կատարմանը։

Կոլլեկտիվ ապահովագրությունը այն է, վոր Պետապի պատասխանատվության ժամկետը, վոչ թե 15 որից հետո յե, այլ 7 որից հետո, ըստ լրացուցիչ ապահովագրության։

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԱՆԱՍՈՒՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Յեթե գյուղացու անասունը հիվանդանում է նա պարտավոր է անմիջապես հայտնել անասնաբուժակին։

Հաճախ հիվանդությունը կարող է լինել վարակիչ. իսկ վարակիչ հիվանդությունը հեշտությամբ մի գոմից կարող է անցնել մյուսը, չապահովագրվածից ապահովագրվածին և վարակել։

Ժանտախտը, սիբիրախտը հնձում են անասուններ-

ին, առանց տարբերելու, չապահովագրվածը ապահովագրվածից։

Շատ տեղերում, անասնաբուժը կամ անասնաբուժակը գտնվում է 60-ից մինչև 80 վերստի վրա, պարզ է, որ գյուղացուն այդ դեպքում շատ դժվար է հայտնել անասնաբուժին։ Այդպիսի դեպքում նա հայտնում է Պետապի գործակալին։

Անասունի հիվանդության դեպքում, նրան բժշկելու համար, գյուղացին պարտավոր է կատարելու անասնաբուժակի բոլոր կարգադրությունները։ Չի կարելի անուշադրության մատնել, կամ հրաժարվել պատճառաբանելով «Մեր պապերը և հայրերը ադպես չէին անում»։ Զգեստք է լսել նաև զանազան «գիտուններին», որոնք իրենց տգիտությամբ կարող են վնաս պատճառել.

Հոգ պիտի տանել, որ վարակը չտարածվի։ Հիվանդ անասնատերը պարտավոր է կատարելու իշխանության հրատարակած բոլոր որոշումները, վարակի դեպքում, պայքարելու խնդրում։ Յեթե անասունը սատակում է պետք է հայտնել անասնաբուժին կամ անասնաբուժակին և Պետապի գործակալին։ Պատահում է, որ վորևե պատճառով հնարավոր չէ լինում գործակալին հայտնելու. այդ դեպքում նա անպայման պիտի հայտնի գյուղխորհրդին և այդ պիտի կատարել շատ շտապ, մի որվա ընթացքում, անկումից հետո։

ՍԱՏԱԿԱԾ ԱՆԱՍՈՒՆԻ ԱԿՏ ԿԱԶՄԵԼԸ։

Ապահովագրված անասունը սատակելու դեպքում, տեղում պիտի կազմել ակտ։ Ակտը կազմվում է վոչ ուշ 2 որից, սատակումից հետո։

Բայց նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը, ավելի ցուրտ ժամանակում, ակտը կարելի չէ կազմել մինչև 4 որից։

Ինչու չէ սահմանվում այդպիսի կարգ։ —

— Ակտը կազմելու և անասունի անկման պատճառը պարզելու համար անհրաժեշտ է դննել նրա դիակը։ Յեթե անասունի դիակը արդեն քայքայվել է, անկման ժամանակ դիակի քայքայումը, ավելի արագ է կատարվում, քան թե ձմեռը։

Ո՞վ է կազմում ակտը։

Պետապի տեղական գործակալը, անասնաբուժը, կամ անասնաբուժակը, իսկ յեթե նրանք բացակայում են, կազմում է գյուղխորհրդի նախագահը։ Ակտ կազմելիս պետք է ներկա լինին 2 վկաներ, որոնք ագգական չեն սատակած անասնատիրոջը։

Անասնատերը պարտավոր է ներկայացնել ակտ կազմողներին անասունի դիակը կամ դիակի մնացորդները, անկման վայրում։ Դիակը չներկայացնելու դեպքում, պետապը վնասը չի բավարարում։ Սակայն լինում են դեպքեր, յերբ անկարելի չէ ներկայացնել անասունի դիակը. որինակ անտառում յերբ գազանները պատառոտել են անասունին, այդ դեպքում ակտը կազմվում է առանց անասունի դիակի։

ՍԽԱԼ ԱԿՏ ԿԱԶՄՈՂՆԵՐԸ ՊԱՏԺԼՈՒՄ ԵՆ.

Յեթե ակտը վորևե կասկած է հարուցանում, Պետապի գործակալը ակտը ուղարկում է անասնաբուժին։ Անասնաբուժը պետք է տա իր յեզրակացությունը, թե հիվանդության բնույթի մասին և թե վճարվելու կամ մերժվելու մասին։ Բացի միքանի հազվագյուտ դեպքերում, յերբ անասնաբուժն ել չի կարողանում վճռել հարցը, այդ դեպքում ակտը ուղարկվում է Հայպետապի գրասենյակին ի անորինություն։

Հաճախ գյուղացիները բողոքում են, «Թե Պետապի գործակալները ուշացնում են վնասների վճարումը» գյուղացիները դատում են այսպես։ «Ել ինչ կարիք կա ակտը

ուղարկելու անասնաբուժի յեղրակացության, սատակեց կովը, գործակալը անմիջապես պետք է վճարի ֆասը»։

Այդ դատողությունը սխալ է և ահա թե ինչու։ Որինակ մի վորևե գյուղացի, կարող է մորթել իր կովը, միսը ծախել և գնալ գյուղխորհրդին պահանջել ֆասը, ակտում գրել տալով թե անասունը սատակել է հիվանդությունից։ Հաճախ լինում են դեպքեր, վոր գյուղխորհրդի նախագահը կամ քարտուղարը համաձայնում են։ Ինչ է նշանակում այդ. այդ նշանակում է, վոր մի վորևե տախոս ոգուտ կստանա, իսկ մյուս գյուղացիներից հավաքած Պետապի դրամները կկորզեն։ Հասկանալի յե, վոր նման դեպքերում գյուղացիները իրենք պետք է հայտնաբերեն այդ և իր ժամանակին հայտնեն Պետապի գործակալին։

Կեղծակտ կազմողները և խաբեբայությամբ Պետապից վնաս ստացողները յենթարկվում են քրեական պատասխանատվության։

ՎՆԱՍՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ.

Յեթե ակտը վորևե կասկած չի հարուցանում, ապա Պետապի գործակալը անմիջապես վճարում է ֆասը։

Լինում է և այսպես, վոր Պետապի գործակալը ծուլությամբ կամ անփութությամբ հետաձգում է ֆասի վճարումը։ Վորպեսզի այդ տեղի չունենա, գրասենյակը հետևում է, վոր գործակալը առանց ձգձգումների վճարի ֆասները։ Իսկ յեթե գործակալը շարունակ ձգձգում է ֆասների վճարումը, ապա գրասենյակը ուղարկում է իր տեսչին, վորը պետք է ուղղի բոլոր թերությունները և գործակալին պատասխանատվության յենթարկի։

Գործակալի բոլոր սխալ գործերի մասին պիտի հայտնել Հայպետապին և տեղական իշխանության։

Խորհրդային իշխանությունը աշխատում է, լավացնելու և բարձրացնելու գյուղական չքավորին և միջակի անտեսությունը։

Տնտեսութ. մեջ եական նշանակություն ունի անասունը, վորը ձեռք բերելու համար, վոչինչ չի խնայում գյուղացին։ Բայց այդ բոլոր ջանքերը կարող են կորչել մի չարաբաստիկ որ, յերբ գյուղացու անասունը սատկում է հիվանդությունից կամ դժբաղդ պատահարից։ Այս դեպքում նրան ոգնության է գալիս Խորհրդային իշխանությունը, վճարելով նրան ֆասը։ Գյուղացին կարող է այդ գումարին ավելացնել իր գումարը և նոր անասուն գնել։

Ապահովագրությունը կատարում է մի այլ լուրջ աշխատանք. նախազգուշացնում է հիվանդությունների դեպքում, ցուցմունքներ տալիս հիվանդությունից զերծ պահելու։ Վորպեսզի անասունները քիչ. հիվանդանան, անհրաժեշտ են, սրսկումները, դեղորյաք և գործիքներ։ Այստեղ դարձյալ ոգնության է գալիս Խորհրդային պետական ապահովագրությունը և իր միջոցներից գումարներ հատկացնում այդ բոլորը գնելու համար։

Խորհրդային իշխանությունը աշխատում է, վոր Պետապի գործակալը չդառնա չինովնիկ։

Պետապի գործակալը պետք է լինի գյուղացու խորհրդատուն, նա պետք է գյուղացիներին տա ապահովագրական գործի մասին բոլոր ցուցմունքները ու բացատրությունները, պետք է հաճախ այցելի իր շրջանի բոլոր գյուղերը։

Ներկայումս դեռ ևս անասունների ապահովագրության գործը վերջնականապես չի լավացած։ Շատ լավ կլիներ, յեթե իջեցնելին ապահովագները և բարձրացնեն ապահովագրական վարչատության գումարը։ Բայց այդ կախված է, անասունների անկման թվից և գյուղացիության բարեկեցությունից։ Որինակ սատակելու թիվը մեծ է լինում, յեթե անասունը անկանոն է կերակրվում։ Ինքը բնակչությունը շատ բան կարող է անել, անասունների խնամք տանելուն և լավ կերակրելուն։

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱՊԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՐԱ.

Պետ ապահովագրության գործը, դա բանվորների և աշխատավոր գյուղացիների սեփական գործն է. այդ աշխատանքների համար միայն վերադաս որդանները չպետք է մտածեն, խորհրդային իշխանության մեջ ապրող ամեն մի բանվոր, բատրակ և գյուղացի պարտավոր է մտածել և հսկել այդ աշխատանքներին, իմանալ թե ինչպես է տարվում աշխատանքները. ինչ բացեր ու թերություններ կան, ինչպես կարելի է այդ բացերն վերացնել և այլն։

Մեր գործակալները նշանակված են գավառակներում աշխատելու մեր բանվորների և գյուղացիների համար. նրանք պարտավոր են ճշտությամբ կատարելու ապահովագրական բոլոր կանոնները. բայց պատահում են դեպքեր, որ գործակալների մեջ լինում են չինովնիկների բնավորություն ունեցող մարդիկ, այդպիսի անձնավորություններն իրենց աշխատանքների ընթացքում առաջացնում են ձգձգումներ, գործը մատնում են անուշադրության, կամ գյուղացիների բողոքները թողնում են անհետևանք և այլն։ Յեթե չլինի աշխատավորության ուժեղ հսկողությունը (կոնտրոլ), մեր աշխատանքները քանի գնա կվատանա, մեր պաշտոնյաները գնալով կդառնան իսկական չինովնիկներ։

Այնպես, ինչպես մեր բոլոր ընտրական մարմինները (գործկոմ, գյուղխորհուրդ) միշտ հաշվետու են իրենց գործունեության համար աշխատավոր մասսաների առաջ, այնպես էլ մեր գործակալները տարեկան 1—2 անգամ պարտավոր են իրենց կատարած աշխատանքների համար, հաշվետու լինել հասարակական ժողովներում։

Գործակալը պարտավոր է զեկուցել իր գործունեության մասին մանրամասն, կանգ առնելով տվյալ գյուղի պետապահովագրական գործի վրա։

Այդպիսի զեկուցումներ լսելիս գյուղացիները պիտի արտահայտվեն այն բոլոր բացերի ու թերությունների մասին, որ նկատվել է աշխատանքների ընթացքում, բացի այդ, աշխատանքը կանոնավորելու համար անել գործնական և առողջ առաջարկություններ։ Այդպիսի արձանագրությունների պատճենները պետք է ուղարկել գավառակային հանձնաժողովին, որը իր նիստում քննության առնելով ամբողջ արձանագրությունը, կառաջադրի կոնկրետ միջոցներ աշխատանքները կանոնավորելու համար։

Այդ արձանագրությունները պետապի գործակալի մոտ պիտի պահվեն հատուկ գործում։ Միայն այդպիսի հսկողությամբ կարելի կլինի վերացնել բոլոր բացերը և կանոնավորել պետ ապահովագրության գործն ու այդպիսին դարձնել աշխատավորության սեփականություն։

ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆՈՂ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

Բողոքները քննող շրջանային հանձնաժողովները կազմակերպված են բոլոր շրջգործկոմներին կից հետևյալ կազմով ա) Շրջգործկոմի ներկայացուցիչը (նախագահը կամ նրա տեղակալը), բ) գյուղացիական փոխադարձ ողնության ընկերության ներկայացուցիչը, գ) շրջանային գյուղատնտեսը և դ) պետապի գործակալը.

Գյուղացիները իրենց բողոքները ընկած անասունների և կարկտահարության վնասների հատուցման մերժման առթիվ ներկայացնում են միայն այդ հանձնաժողովին։

Նկատի ունենալով, որ այդ հանձնաժողովը ղեկավարվում է բացառապես պետապի գոյություն ունեցող կանոններով, հրահանգներով և կարգադրություններով և

վորոշումները են կայացնում միմյան հիմք ընդունելով այդ կանոնները և հրահանգները, այդ վորոշումը համարվում է վերջնական. ուստի կարիք չկա վոր բողոքող կողմը նորից դիմի պետական գրասենյակին։

Հանձնաժողովը բոլոր բողոքները քննում է վոչ ուշ քան մեկ շաբթվա ընթացքում, բողոքը ստանալու որից։ Գործակալը պարտավոր է անձամբ կամ համապատասխան գյուղխորհրդի միջոցով անմիջապես հայտնել բողոքողին, հանձնաժողովի վորոշման մասին, վորի համար տալիս է նրան արձանագրության քաղվածքը։

Հասարակական ստուգման համար գործակալության գրասենյակում կախվում է հանձնաժողովի արձանագրությունների պատճենները։

1928-29 ԳՈՐԾԱՌ. ՏԱՐՎ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՆԵՐԸ (ԴՐՈՒՅՔՆԵՐԸ)

Համաձայն Ռեխատացիի յեվ պատեպ. խորհրդի վորոշման 1928 29 գործ. տ. կոպարային ապահովագրության խոշոր յեղջյուրավոր անասուններին, ձիերի, ուղտերի, ջորիների յեվ ավանակների համար սահմանվում է հետևյալ պատասխանատվության նորմաները յեվ ապահովագները (դրույքները)։

Անասունների տեսակը	Հասակը (տարիքը)	Պատասխանատվության գումարը		Ապահովագինը
Կով	2 տարեկան	35	4,5 %	1—58 կ.
Յեզ		35		1—58 կ.
Մատակ	և բարձր	50		2 – 25 կ.
(գոշակով)	հասակի	50		2—25 կ.
Գոմեշ				
Այծ	1 1/2 տարե-	15 ռ.	4,5 %	—68 կ.
Յերինջ	կանից մինչև	15 ռ.		—68 կ.
Գոմշաչար	2 տարեկանը	15 ռ.		—68 կ.
Գոմշայերինջ		15 ռ.		—68 կ.
Ձի	2 1/2 տարե-	50 ռ.	6 %	3 – 00 կ.
Ջորի	կան և բարձր	50 ռ.		3 – 00 կ.
Ուղտ	հասակի	50 ռ.		3—00 կ.
Ավանակ		20 ռ.		1—20 կ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄԱՍԵՆԻՑԻՆ ԱՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0211386

44.240